

Սմբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիւնիկ», Ի
Աղեփասնորիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

Ղրգ.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵՍ 25

Բ Ա Ճ Ն Ե Գ Ի Ն Ը
Կ Ա Ն Ն Ի Կ Է
Ձեռագիր ետ-չ'դար-
ձուիր

Փ Ի Ի Ն Ի Կ

Կը ծախուի ՄԷԿ դրուս ողջի

Շ Ա Բ Ա Ր Ա Ր Ե Բ Բ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ

Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵՍ 8

ԿՈՎԿԱՍ
ՏՅՐԵԿԱՆ Բպլ. 6
Ազդեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով.

Գ. ՏԱՐԻ

24 ՅՈՒԼԻՍ 1902

ԹԻԻ 6

ՎԵՐՋԻՆ ԱԶԳ

Արտասահմանի մեր բաժանորդներէն,
հակառակ ա՛յնքան ազդերու, ա՛յնքան դի-
մուկներու, չը ստացանք ցարդ ո՛չ մի ման-
սարսօր:

Յարգելով զիրենք եւ լրագրական սո-
վորութիւնը, մենք իրենց կանոնաւորա-
պէս զրկած ենք թերթ, զոր չ'են մերժած,
այսինքն ընդունած են:

Մերժողներուն անմիջապէս դադրեցու-
ցած ենք թերթին առաքումը, իսկ չը մեր-
ժողներուն բնականաբար պարտաւորուած
ենք կանոնաւորապէս շարունակել առա-
քումը:

Արդ, վերջին անգամ մըն ալ կը դի-
մենք մեր Պատ. բաժանորդներուն, խնդրե-
լով որ ա՛լ հաճին վճարել պարտքերնին.
Իսկ եթէ մտադրած են թերթը ձրի կար-
գալ, դոնէ թո՛ղ ազնուութիւնն ունենան
մերժելու դայն, որով ազատած կըլլան մեզ
թուղթի ու թղթատարութեան բոլորովին
աւելորդ ծախքերէ:

Թո՛ղ վստահ ըլլան, մենք իրենց ա-
նունները չենք հրապարակել:

Փիիւնիկի ՊԱՅԲԱՐԸ

ԵՒ

ԱՂԵՔՍԱՆԴԻԻՈՅ ԱԶԳ. ԳՈՐԾԵՐԸ

Մի՞՞՞՞՞ — պիտի մըթմըթան մեր ըն-
թերցողներուն է՛ն լրամոլները, որոնք
ուխտած են չը շփուիլ մեր ազգային
կեանքին հետ — ո՛րք, դեռ չը վերջա-
ցա՛ւ, նորէն աշգային գործե՛րը մտիկ
պիտի ընենք...:

Հոգ չէ՛, այդ կարգի ընթերցող-
ները վաղը պիտի հասկնան թէ՛ ո՛րքան
կենսական է հարցը, որուն շուրջը կը
դառնայ պայքարը, թէ՛ պէտք չէ խաբ-
ուիլ երևոյթներէն, թէ՛ ծաղրել
պէտք է սպառնալիքները. թէ՛ այս
վերջին մէկ տարուան մէջ ի՛նչ զգալի
բարեշրջում կատարուեցաւ, ազգային
կեանքին տեսակէտովը, մանաւանդ
մեր երիտասարդութեան մէջ, շնորհիւ
մինչև հիմայ մղուող պայքարին, որ
պիտի չը վերջանայ, ցորչափ մեր փա-
րաւոնիկները գլուխ չ'են ծռեր Օրէն-
փիւն ու չ'են ճանչնար ժողովուրդին
անբռնաբարելի իշխունքները:

Կը յիշենք ամենքս ալ, անցած տարի Թաղ. Խորհուրդի պէս բան մը ունէինք, որ ինքնակազմ էր ու կը վարէր մեր ազգ. գործերը: Անո՛ր օրով ու ձեռքով ծախուեցան ազգին հոգերը, անո՛ր օրով ու ձեռքով սկսաւ շինութիւնը Լաքիւրիներու շէնքին. անո՛ր օրով Աղքատախնամին խաղբու- թիւնները տեսանք ու այս օրուան խեղճութիւնները կը տեսնենք. անո՛ր օրով աւրուեցաւ ազգային միակ կըր. թական հաստատութեան, Պօլոսեան երկ. վարժարանին մեքենան:

Պէտք էր կազմալուծել այդ Ինքնակազմը, ժողովուրդին կամքովն ու քուէներովն ընտրելու համար Սահմանադրական Խորհուրդ մը: Եւ այդ նոր Խորհուրդը ընտրուեցաւ, վաւերացուեցաւ, գործի սկսաւ, պաշտօնաբաշխումն ըրաւ, նիստերը գումարեց, ու յետո՛յ... Մնացեալը գիտենք:

Իրանք որ Վսեմ. Պօլոս բաշանիս ձեռ Գահիրէցի եւ, արդէն իրաւունք չ'ունի՛ն խառնուելու Աղեփ. ազգ. գործերուն եւ, իմաստով նամակ մ'ուղղեց մեր երանաշնորհ Սրբազանին ու հրաժարեցաւ (առ երեսս): Ետեւն տեղացին ուրիշ հրաժարականներ, նոյնպէս կեղծ, ու այսպէս, մինչև որ «Ես Գահիրէցի եւ» յայտարարողը յաջողեցաւ նորէն խառնուիլ մեր ազգ. գործերուն, և թէ՛ զինքն ու թէ՛ իրեն յարող միւս կարծեցեալ հրաժարողները Խնամակալ հռչակել, գուրս նետելով Թաղ. Խորհուրդէն երկու ոչ-հրաժարողները, այս վերջնոց տեղներս առնելով երեք նորեր, ինամակալութեան հագուստով:

Կ. Պոլսոյ Աղգ. Պատրիարքարանը կը ծեծէ արդէն այդ խնդիրը. թո՛ղ ծեծուի, ասդին ալ թո՛ղ շարունակէ պաշտօնավարել Խնամակալութիւն մը, որ անզոյ է օրէնքով, որ վաւերացուած չէ՛, ու չը կրնար ալ վաւերացուիլ: Պոլսական գրեթէ բոլոր լուրջ

թերթերը կը զբաղին չժամանակէ մ'ի վեր տեղիս. Թաղ. ընտրութեանց եւ յարակից խնդիրներով: Մեր Պատ. ընթերցողներուն ուշադրութեանը կը յանձնարարենք այս առթիւ Բիւզանդիոնի մէջ հրատարակուած և վերջերս ալ Սուրհանդակի մէջ ալ երեցած Օրէնագիտի ընդարձակ ու շահեկան յօդուածը:

Գառնանք մենք տեղիս ազգ. գործերուն:

Այսօր ամեն մարդ գիտէ որ Սահմանադրութիւնը բռնաբարուած է հոս ու կամայականութիւնն է միակ շեկավարողը մեր ազգային գործերուն: Ասոր հակառակը՝ Մկրտիչեան մը կամ անոր Թորոսեանը միայն կրնայ ապացուցանել...

Ազգապատկան կալուածները ծախուեցան, առանց գումարելու Աղգ. Ընդ. ժողով մը, և առանց առնելու ժողովուրդին հաւանութիւնը, և որ ամենէն ձայնորդն է, առանց Աղգ. Պատրիարքարանին կամքն ու վաւերացումն ստանալու:

Ահա՛ զեղծումը, թէկուզ վաճառման ձեւակերպութեան մէջ ըլլայ:

Թէ այդ վաճառումէն ո՞րչափ վնասեց ազգ. արկղը, պիտի հետզհետէ դրենք. թուանշաններու և անողոք վաւերաթղթերու վրայ հիմնուած:

Արդ, այդ վնասները քօղարկելու կամ ուրիշ կերպով, ժողովուրդին աչքին փոշի փչելու համար, անճոռնի շէնքին շինութեանը ձեռնարկուեցաւ, առանց խորհրդակցութեան մեր ազգային ճարտարագետներուն, որոնց մէկէ աւելի է թիւը քաղաքիս մէջ, և որոնք զանցառելի անուններ չ'են հոս:

Աղքատախնամի վարչութիւնը՝ աղքատներ հոգալու, մանաւանդ հիւանդներ դարմանել տալու մէջ գիտակցօրէն թէ կուրօրէն գործած է խոշոր սխալներ որոնք մէկիկ մէկիկ հրապարակ պիտի հանուին:

Այս տողերը կը յուսանք թէ իբր յառաջաբան ծառայեն ընդարձակ ու սուսնասիրութեան մը, որ յառաջիկայ թիւերով հետզհետէ պիտի հրատարակուի: Իսկ տեղիս այգ. երկս. վարժարանին ամսավերջի հարցաքննութեանց առթիւ այս թիւով միայն երկու յօդուածներ կը հրատարակենք, խոստանալով յաջորդ թիւով հրատարակել մեր տպաւորութիւնները, գաղափարներն ու խորհուրդները:

ՔՐՈՆԻԿ

— ՊՐԻԻՒՄԷԼԻ ԳՕՆԿՐԷԻՆ վրայ մանրամասն տեղեկութիւններ կ'սպասենք այս շաբթուան թղթաբերով: Առ այժմ ու է լուր չիկայ: Բրօ Արմենիան միայն հրատարակած էր Գօնկրէին մասնակցողներուն ցանկին շարունակութիւնը:

ՊԱՐՏԻՔԻ ԿԱՏԱՐԷ՛

Պարտիք կատարէ՛.

Այս երկու բառերը վսեմ դաս մը կը պարունակեն. դաս մը, որ անհատին փառքը կ'ապահովէ և ընկերութեան բարօրութիւնը:

Այն օրէն ի վեր, երբ յաւիտենականին մասը շարժման մէջ դրաւ բնական ուժերը՝ անոնց իւրաքանչիւրին սահմանուեցաւ պարտք մըն ալ, ու ահա կը տեսնենք որ անոնք կ'ընթանան անվրէպ պարտքերու շաւղին վրայ. ու կը կազմեն տիեզերական գործունէութիւնը, այսինքն կեանքը:

Ինչ պիտի լինէր կեանքը, եթէ բնական ուժերէն մին կամ միւսը թերանար երբէք իր պարտքէ կատարման մէջ. ինչ պիտի

լինէր եթէ շոգին չի հաճէր այլևս վեր բարձրանալ, կամ եթէ ամպերը զլանային իրենց ցօղը: Ինչ պիտի ընէինք, եթէ լուսոյ շառաւիղները չը մաքառէին խաւարի իշխանութեան դէմ, կամ եթէ երկրագունդը դժկամակէր հնազանդելու իր հրեղէն վեհապետին:

Պա՛րտքն է որ կ'ուղղէ, կը մղէ նիւթեղէն տարըն ու անոր ամէն մէկ հիւլէն. անո՛վ է որ կը շողչողան աստղերը՝ երկնից մէջ, ու կը սուրան հովեր՝ երկրիս վերև, անո՛վ է որ կը փթթի ծաղկալից գարունն ու կը ծագի զուարթագեղ արշալոյսը: Ու այն սկզբունքը որ կեանքն է նիւթական աշխարհին՝ բառոյականին մէջ լծակ մըն է ամենազօր, սրուն առջև թաւալական կը գլորին վիթխարի զանգուածները թշուառութեան, տգիտութեան և անօրէնութեան:

Իւրայնե՛լ այդ սկզբունքը, տիրանալ այդ լծակին, այս պէտք է լինի դաստիարակութեան գլխաւոր վախճանը: Կանուխ հասակէ սովբեցնել որ, եթէ մարդկային ոգին յառաջդիմութիւն կը պահանջէ, բարոյական գերազանցութիւնն է յառաջդիմութեան չքնաղագոյն ծաղիկը, իսկ պարտքի կատարումն է բարոյական գերազանցութեան փորձանշանը: Պարտաճանաչութիւն. այս ձայնը թող հնչէ մանաւանդ դասատուներու սրտին մէջ, ամեն սրտի մէջ, մեր բաղձանքներն ու հակումները թո՛ղ լուեն անոր անոր առջև, հաճոյքի սէրը, ոսկիի տենչը և համբաւի հրայրքը թո՛ղ հետևին անոր. վերջապէս այն թող լինի մեր կեանքի առաջնորդն ու նպատակը:

Ինչ է մարդու կեանքն առանց պարտքի:

— «Բնացայ, ու երազիս մեջ աւնոջ քան մըն եր կեանքը».

Արթնցայ, ու կասիցայ որ միայն պարտք մըն է կեանքը:

Այսպէս սահմանած է կեանքը մի իմաստասէր բանաստեղծ. Բայց ես կը նախընտրեմ միաբանել անոնց հետ որոնք կը հաւատան թէ՛ կեանքը ո՛չ միայն պարտք մըն է, այլ և անուշ բան մը:

Պարտքդ կատարէ՛ գուն ալ, ու պիտի տեսնես որ ոյժ մըն ես աշխարհի մէջ և բարիք մը՝ ընկերութեան համար. ու պիտի զգաս որ արդարեւ անուշ է կեանքը. եթէ կուզես բարին գործել, կամ կըզգաս հուշակ հանել, եթէ կը փախադիս դիւցազն կոչուիլ կամ կը ցանկաս մեծ լինել մի՛ վազեր քայլամուտը՝ դէպի անծանօթ ասպարէզներ. ճշմարիտ բարեգործութիւնն ու լաւադոյն հուշակը, օգտակար դիւցազնութիւնն — իրական մեծութիւնը — պարտքիդ կատարման մէջ փնտռէ՛ նաւաստին՝ որ փոթորկակոծ նաւուն զեկը չը թողուր ցմահ, հրչէ՛ն օր լափլիզող բոցին մէջէն կը խոյանայ դէպի վտանգը, զօրականն՝ որ հրացայտ ոււմբիններքե կը փաթթուի դրօշակին. բծիչն՝ որ մահաշունչ համաճարակին մէջ կը սրանայ տունէ տուն — օրինակելի տիպարներ են, որոնք պարտքի կատարման մէջ կը փայլեցնեն բարութիւնն և հուշակը, դիւցազնութիւնն ու մեծութիւնը:

Թողունք անհատներու անունները, որոնք դարաւոր սքանչայման աւարկայ եղած են և պիտի ըլլան: Ազգերու կեանքն իսկ պերճախօս վրկայ է այն գերազանց աշգեցութեան զոր պարտքի գիտակցութիւնը գործած է և կը գործէ: Ուր որ հզօր է այդ գիտակցութիւնը՝ հոն գեղածիծաղ կը ժպտի բազդը:

Անցեալին մէջ Հռովմ՝ Նախախեց իր ոսոխները ցորչափ իր զաւակներն հաւատարիմ մնացին իրենց պարտքին: Այսօր ա՛յն ցեղերն են գերիշխան՝ որոնց մէջ կը տիրէ այդ ոգին, ինչպէս Անգլո-Սաքսօնն, որ համաշխար-

հային դաս մ'ալ կ'աւանդէ իր զաւակաց միոյն, ծովակալ Նելսընի վերջին բառերովը թէ՛ «Գոհանաւ զԱստուծոյ պատրօսս կասարեցի»:


Ահա կենսական դաս մը հայութեան համար:

Ազգին վիճակը բարեւաւելու, և զարգացումը փութացնելու ինչ միջոց կայ աւելի ապահով, ինչ ուժ կայ աւելի ազգեցիկ: Պարտաճանաչութիւնն ամէն հայու նշանաբան թո՛ղ ընտրուի, ազգային ամեն յարկի և ամեն հիմնարկութեան մէջ տիրող ոգին ու ամեն դասակարգի պաշտօնեայէ պահանջուած առաջին պայմանն՝ ա՛յն թող լինի, ու հաւատա՛նք որ այն ատեն պիտի յաջողինք մեր նշատակին մէջ: Կրթական ու բարեգործական հաստատութիւնները պիտի ծաղկին... եկեղեցական և վանական կալուածները պիտի արդիւնաւորին, կրօնաւորը պիտի յարգէ իր կույման սրբութիւնը, դաստիարակը պիտի ըմբռնէ իր պաշտօնին վսեմութիւնը, վարչական մեքենան պիտի գործէ անխափան. մէկ խօսքով՝ պիտի բացուի ճշմարիտ յուռաջգիմութեան դարագլուխ մը:

Նրաղի աշխարհ մը չէ ինչ որ կը պատկերացնեմ, սիրելի ընթերցող, այլ շօշափելի իրականութիւն մը, եթէ միայն պարտքդ կատարես: Պարտքդ կատարէ՛ ուրեմն, ո՛վ որ ալ ես, ինչ որ ալ ես, մի՛ մոռնար ամենեւին Ալէքսանդր Բօքի խօսքը զոր այսպէս կըրնամ բացատրել. «կացութիւնդ կամ դիտքդ չունի աւօր կամ պատիւ»:

Լաւ կասարէ՛ քո դերդ, հո՛ղ է ամեն փառք պատիւ: Բ.

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ



Ընթերցողը յօդուածիս վերնագիւրը կարդալուն պէս՝ հանդէսի մը նըկարագրութիւնը կամ ճամբորդութեան

մը թողուցած տպաւորութիւնները պիտի գուշակէ հաւանականաբար: Ոչ «Տպաւորութիւններու» նիւթը այս անուան տակ սովորաբար գրուածներէն տարբեր պիտի ըլլայ:

Տեղուս Պօղոսեան Ազգ. Երկ. Վարժարանի տարեկան հարցաքննութիւններուն — որոնց մի քանի օր կրցայ ներկայ գտնուիլ — վրայ՝ իմ կազմած սեպհական կարծիքս, անձնական գտնաւորումներս պիտի ըլլան:

Ես չ'դիտեմ թէ անցեալ տարի ինչ արդիւնք ունեցած են նոյն վարժարանի հարցաքննութիւնները. բայց դասատուներուն այս տարուայ շրջանին վրայ պահանջուած տեղեկութիւններուն 'ի պատասխանի տուած բացատրութիւններէն կարելի է մակարբել թէ՛ հերու՝ նախանձելի վիճակ մը, գոհացուցիչ արգիւնք մը չ'են տուած արդէն: Պատասխաններ են անոնք, որ խոստովանանքի մը չափ գովելի են ինքնին: Ատկէ զատ անցելոյն հետ կը պատկերացնեն և ներկան:

Կարծիքս այս առթիւ յայտնելէ առաջ, ըսեմ անցողակի թէ հոս, Աղեքսանդրիոյ մէջ, ազգ. գործերու բարուք վարչութեան համար կուսակցութիւններու յառաջ բերած օգտակարութիւնը և, հետեւաբար, կուսակցութիւնը այն աստիճան սխալ ըմբռնուած է որ, մարդ վայրկեան մը կը վարանի ո՛ր և է բանի վրայ իր անհատական դաղափարը հրապարակել: Դիտեմ «— կուսակցական մը, սահմանաւորակա՛ն մըն է գրողը» պիտի վերավրայ քթին տակ ազգային շահերով չ'հետաքրքրուող — որոնք բաւական խոշոր թիւ մը կը կազմեն դժբաղդաբար — ամեն անհատ: Ազատ են: Անկողմնակալ քննադատութեանց բացարձակ օգտակարութիւնները անուրանալի են սակայն:

Զանազան առթիւ, ըլլա՛յ ազգային, ըլլա՛յ օտար, թէ՛ նախակրթա-

րանի, թէ՛ կրթարանի և թէ գուշակներու եռամսեայ, վեցամսեայ և միամսեայ հարցաքննութիւններու ներկայ գտնուելու պատեհութիւնն ունեցած ենք: Պօղոսեան երկսեռ վարժարանի ուսանողները քննելու համար իրենց վարժապետներուն վիճակահանութեան տոմսակի ձևով պատրաստած հարցաթուղթերուն և անոնց քաշելու կերպին խելքս չը հասաւ շիտակը, կը խոստովանիմ: Տարբերութիւնը սա էր սակայն, որ իմ գիտցած Հէլվանի, Սան Սթէֆանօյի, Տահերի վիճակահանութիւններէն թուղթ առնողները իրենց թիւերուն շահելուն վրայ հարիւրին մէկ յոյս հազիւ ունին: Մեր երկսեռ ուսանողները շահելու կամ չը շահելու սրտի թփ-թփը չ'ունէին, որովհետեւ, ինչպէս կ'երևար, միշտ... իրենց մտքին մէջ ունեցած թիւն էր որ կը քաշուէր: Արդար եղած ըլլալու համար, ըսեմ որ հարցաքննութիւնները իրենց այս կերպին մէջ աչքկապուկի ձևեր մ'առած էին:

Իւրաքանչիւր կարգի, իւրաքանչիւր դասին համար կարծիք յայտնել խիստ երկայն պիտի ըլլար. բան մը որ իմ նպատակէս ալ դուրս է արդէն: Բայց բան մը որ դիտելի էր, հարցաքննութիւններուն իրաւամբ — առանց առարկութեան — սպասուած արգիւնքը չ'ունենալուն պատճառը՝ երկսեռ աշակերտներուն ըմբռնումին, մտաւորականին մէջ փնտռելու չ'է երբէք: Չ'եմ ալ ըսեր որ պաշտօնեաները խղճի մտօք աշխատած չ'ըլլան: Միակ պատճառ՝ ուսուցման եղանակն է: Պէտք է փոխել, յեղաշրջել ուսուցման այն եղանակը որ պատեհելիական է պարզապէս: Եթէ դասատուները կրնան խղճի մտօք ըսել թէ՛ իրենց ամեն շանքը ի գործ դրած են Աղեքսանդրիոյ հայ մանուկները դաստիարակելու գործին մէջ և չ'են կրցած յաջողիլ, կը կրկնեմ, յանցանքը աշակերտներունը չ'է:

իրենց ուսուցանելու կերպինն է, հետեւաբար և իրենցը: Պէտք է փոխուին անոնք: Մէկ տարուայ ժամանակամիջոցը քիչ չ'է: Մանաւանդ կան դասատուներ որ տարիներէ ի վեր կը պաշտօնավարեն հոն: Իպրոցին պիտո՞ճէն ընդարձակ է, և կարելի է եւրոպական Կօլէժի մը համահաւասար ընել զայն: Այդ պատմութեան — դասին ըսել չ'եմ ուզեր — ազգ. կրթութեան և գաստիարակութեան, և, հետեւաբար ազգ. զգացումի պակասը շօշափելիօրէն զգալի է: Աւելին կայ: Չ'գիտեմ ի՞նչ բան տեղի տուած էր Համիսիյեի Մարշի (1) մը պէտքին որ ճիշդ այդ ազգ. զգացումի պակասը դիտած պահուս կը թնդացնէր ամբողջ դպրոցը: Չ'եմ վարանիր ըսելու որ հայհոյանքի մը չափ ծանր հնչեց ան՝ ներկաներու ականջին: Այդպիսին նուիրական տան մը մէջ այդ Մարշով մեր վրայ քալողներուն, մեզի կործանողներուն, մեր ամենասուրբ վայրերը, մեր պատիւը պղծողներուն քայլերդը հնչեցնել ծիծաղելի չ'է՞ք գտներ, խնդրեմ: Չափահասներու համար Համիսիյեին՝ իբրև երաժշտական լաւ ձայնադրուած կտոր մը՝ ջութակի կամ դաշնակի վրայ զաշնել, կը հասկնամ: Ասիկա չ'աշդարացներ սակայն, առաջնոյն անհանդուժելիօրէն անպատեհութիւնը: Կ'զգամ թէ հարցաքննութիւններէ դուրս բաներ են ասոնք, բայց «Տպաւորութիւններու» մասը կը կաղմեն անշուշտ:

Աւրիշ պարագայ մըն ալ կայ դիտելի. — Իպրոցին հոգը ստանձնողները (2), կրնամ ըսել թէ երբէք ի-

(1) Այդ Մարշին մուծումը վարժարանին մէջ՝ Պ. Տնօրէնին ազգասիրութեան գեղեցիկ ապացոյց մը կուտայ: Մ. Խ.
 (2) Բնականաբար նախորդ հոգաբարձութեան ակնարկել կ'ուզէ Պ. Յօդուածագիրը. արդին՝ պատասխանատու բունել պէտք է յտաջիկայ տարուան համար: Մ. Խ.

րենց պաշտօնին պահանջները դործադրած չ'են: Պօղոսեան երկսեռ վարժարանի հարցաքննութիւնները կրնան աննշան արդիւնք մը տուած ըլլալ: Բայց քննութեան այդ օրերուն հսն մտնող ազգ. սերնդին դաստիարակութեամբ ու կրթութեամբ հետաքրքրուողներուն մեծագոյն մասը՝ ինծի հետ՝ ըսաւ ապահովաբար. — «Մե՛զը ազգին մանկուտոյն, մե՛զք ազգին դժբաժինս»

Վ. Վ. ՇԱՄԼԵԱՆ

ԲԱՅ ՆԱՄԱԿ

ԻՄ յարգելի (1) անուանակցիս
 Տ. Հ. Պերպերեանի

«Ճնդրեմ, պարո՛ն, վեր մի՛ ելնէք, հոն ուրիշ կարգադրութիւն եղած է. նոյն իսկ եղողներուն համար ալ հրաման չը կար, բայց . . . »

Այս աղերսանքը կ'ուզէր մօրուսաւոր պարոն մը՝ մրայօն ուրիշ պարոնի մը կռնակին, արիւն քրտինք թաթխուած, ալ ու ձախ կը վազէր, կը ցատկուտէր ու կ'անցնէր երկսեռ հանդիսականաց մէջէն այդ խոշոր բառերը պոռալով: Մօրուսաւորը՝ տեղիս Ազգ. դպրոցին Տնօրէնն է, իմ յարգելի անուանակիցս (յարգելի բառը պաշտօնին կը վերաբերի), իսկ մրայօնը՝ ես, նոյն վարժարանին նախկին աշակերտներէն մէկը:

Իուք, յարգելի տնօրէն, գոնէ պէտք է գիտնայիք թէ՛ ինծի արդիւնուած չ'էր վարժարանը դալ, հանգէսը դիտել ու հանդիսավայրին մէկ անկիւնը գրաւել: Զիս նախատեսիք հրապարակաւ: Ես իրաւունք ունէի

(1) Եւրոպական թուրքոյ մէջ ընդհանրապէս վարժապետները ՀԱՐԳԵԼԻ, իսկ Ասիականի մէջ ալ ՊԱՏՄԻԵԼԻ կը յորջորջուին: Մ. Խ.

ձեզի արժանավայել պատասխանը տալու, բայց լուեցի, կարգն ու հանդարտութիւնը պահպանուելու համար: Ինչ մը հեռուն ամբոխին մէջ կը գտնուէր զարգացած երիտասարդութիւն մը, որ չը պիտի թերանար ձեզ վարձատրելու ձեր այդ կասարեւոյնը ու նրա-ցած քաղաքավարութեան փոխարէն:

«Հոն ուրիշ կարգադրութիւն եղած է...» ով, լաւ գիտեմ, կ'ալիսարկէք թիկնաթուռներուն, որոնք դպրոցին այդ պատշգամին երկայնքը շարուած, կ'սպասէին որ փառաւորուին գերապատիւ, վսեմաշուք ու ազնուաշուք յետոյքներով: Այո՛, ինծի պէս հասարակ մահկանացուներուն արդիւնուած էր այդ պատշգամը, որ, ձեր հանձնարեալ կարգադրութեամբ, մենաշնորհեալներու յատուկ օթեակներու վերածուած, կ'իշխէր թատերական տեսարանին վրայ:

Թասերակաս բառէն չը խրոչիք, ճիշդ ու պատշաճ որակականն է շաբաթներ առաջ մտածուած ու խնամով մը սարքուած մանկապարտէզի այդ աղոր հանդէսին, ճամբորտ ներկայացում: Իսկ դուք այդ ներկայացումը կուտայիք շոջերուն ու ամբոխին անակնկալ (Surprise) մ'ընելու դիտումովը, նոյն շաբաթուան հարցաքննութեանց բոլոր խաղքութիւնն ու բոլոր խեղճութիւնը պարտկելու յոյսով:

Այս ամենքը գիտցող երիտասարդութիւնը գիտէ նաև թէ՛ տեղիս աղբ. երկ. վաշտարանը կը կառավարուի հիմայ եռապետութեամբ. մի՛ ցաւիք, տնօրէնը մինակ դուք չ'էք. երեք տնօրէն էք, երեքնիդ ալ հին համբաւի մը կրթնած, փառաւոր զրօներ, երեքնիդ ալ կրթական պիւտձէին բեռները:

Ի՞նչ պիտի դաստիարակէք մատաղ սերունդը, ձեր յարչի հաշիւներովը... Եթէ ձեր բերնէն ու ձեր ձեռքէն պիտի ընդունի անի իր բա-

րեկրթութիւնը, ապուշ բան է յոյս դնել անոր վրայ...»

Ի՞նչ կ'ըլլար, այնչափ պարապուրթիւններու, այնչափ աւելորդ առարկաներուն տեղ, քիչ մը դաստիարակութիւն թո՛ղ տրուէր անոնց, առողջ դաստիարակութիւնը, որ, աւա՛ղ ձեր քով չը կայ:

Ի՞նչ կ'ըլլար, ձեր խելքը քիչ մը բանեցընէիք անոնց ըմբռնել տալու իրենց սովորածը, փոխանակ թուրքակի պէս բառեր ու բառեր գոց ընել տալով անոնց մատաղ ըզեզը տանջելու:

Ասիկայ կը պահանջէ տեղիս յառաջդիմասէր հասարակութիւնը, և կը բողբէ որ դուք, խօսք մէկ ըրած, կեղծաւորներ ու սողուններ կը պատրաստէք միայն, ձեր վարքովն ու ձեր օրինակովը. բան մը որ կրնամ ապացուցանել, երբոր հարկը ներկայանայ. (խօսքս մասնաւորապէս չըջանաւարտուներուն համար է:)

Թուրքիոյ մէջ ազգ. կրթութիւնը բռնաբարուած է, իսկ եթէ Արտասահմանի դպրոցները մեր ողորմելիին պէս են, ցաւալի՛ է վիճակնիս:

Հ. Պերպերեաններ, Մ. Ասխանազներ ու Տիկ. Արևալենիներ— ահա՛ մեր ինճէլիգէնճները. ու ասոնք, անցեալի այս խոչոր անունները պիտի պատրաստէին մեր սերունդը. մօտ է ուրեմն հայութեան արշալոյսը ծագելու...»

Օ՛, սրտի ու մտքի դահիճներ, դուք ձեր կեղծիքներով ու գձուձ շահասիրութիւններով վար չ'էք մնար Լօյոյաջի աշակերտներէն...»


Պիտի խնդրէի, յարգելի՛ էֆէնտի, որ տնօրէն ըլլալէ առաջ՝ մարդոց հետ վարուելու կերպը սորված ըլլայիք, այսինքն քաղաքավարութիւնը:

21 Յուլիս 1902

Աղեքսանդրիա

Հ. Ն.

ՆԱՄԱԿ ԳՎՀԻՐԷԷՆ



Գահիրե 22 Յուլիս 1902

. . . Բարեկա՛մ.

Ես ալ չ'եմ գիտեր ինչ գրեմ. Ես-
տոնց արդէն մտոցեր եմ գրելու կանոն-
ները, որովհետեւ կորսնցուցած եմ
Ասֆանաչի գրագիտութեան 2 գոհար
հասորները՝, որոնցմով կը փայլին այ-
սօր ձեր — երանի՛ ձեզի — ազգ. դպրոցին
երկսն աշակերտներուն երես-
ները:

Բայց, ի՛նչ ըսեմ, վերջապէս բան
մը պէտք է գրել. քղթակցութեան պէս
բան մ'ուզած էիք Գալստեան վարժա-
րանին ամալերջի հարցախնդրութեանց
եւ սրի՛ց քանի մը կարելու դէպքերու
վրայ:

Ահա գիտցածս:

Հարցախնդրութիւնները Ես խեղճ
անցան. աշակերտի ծնող կամ ուրիշ
պարագայի, քանի մը Ես փոքրաբիւ
դպրոցատէր այցելողներ եղան, որոնք,
դժբաղդաբար, յուսախաբ հեռացան
վարժարանին սահմանէն, ուր հարցա-
խնդրութիւնները կը կատարուէին: Ար-
դիւնք չըկար, բարեկա՛մ, պիտի ըսեմ,
յարգելով հետեւեալ սակաւաբիւ բա-
ցառութիւնները. պատերուն երեսները
բռնող ու դպրոցին երեսը հերմիցնող
գեղեցիկ ցուցադրեալ պատկերներն ու
ընկեր ձեռագործները, միակ դասերը
սեանք խնամով ու օգտակարապէս ա-
ւանդուած. պատի՛ւ ուրեմն զժազու-
րեանք եւ ձեռագործի ուսուցիչներուն:

Թուաբանութեան դասերուն մէջ
առհասարակ յաջողած էին աշակերտ-
ները, Ազգ. Պատմութեան ու Առնիկ
սնտարութեան մէջ գոհացուցիչ պատաս-
խանքներ տուին աշակերտուհիները:

Գեղեցկագրութեան մէջ ընդհան-
րապէս լաւ են: Կարգապահութիւնը

բաւական կը տրուէ դպրոցին մէջ. Ա-
տոնք ամենքն ալ լա՛ւ:

Սակայն, ցաւելով դիտել կուտանք
թէ մեր Գալստեան վարժարանը, զորիկ
ո՛ր եւ է յայտագրէ, բողոսած է իւրա-
քանչիւր ուսուցիչի քանակն ինքնաբեր-
կաւ Ես Ես խղճմանակին: Այլանդակ
ուսուցման մէքոս մը կը տրուէ սան-
ձարձակ: Կը տեսնես հոս ուսուցիչ մը,
որ անխտիր Առողջաբանութիւն կ'ու-
սուցանէ ալգ. եւ ընդհ. պատմութեան
հետ: Աղիք, Աղեմանդը, բոք, ստամոքս
ու Մոնոմախոս, Գոգ ու Մագոգ եւ
փայծաղ, ինչ որ կայ ազգաբանական թէ
մարդաբանական, պատմական թէ մար-
դակագմական, միեւնոյն ուսուցիչը
կ'աւանդէ զարմանալի մասնագիտու-
թեան մը խառնելով իւր թին փիլիսո-
փայութիւն մը . . .

Առդին կը հանդիպիս ուրիշ ցա-
ւագաւթի մը, որ, ճիշտութեան արարե-
րէն բարգմա՛նութիւն ըսուած փորձանք
մը կը սարսփէ մատուց քղեղիկներու
վրայ, միևնոյն անդին, ճիշտութեան
վարժուհին ու արարեղիկ ուսուցիչը
զո՛ւր կը ջանան զէք բառ մը հասկը-
նալ անոր արտաոց արտասանութե-
անէն . . .

Մէկ խօսքով, սերունդին խառ-
նոցն է Գալստեան դպրոցը, որուն
վրայ 2 քառի առաջ գրած ես արդէն
Նորոքի մէջ . . .

Ո՛վ է յանցաւորը:

Առաջնա՛րոր թէ ժողովուրդը:

Երանելի՛ ժամանակ:

ՏԷԳ

ԳՈՂ ՄԺԴՅՈ

Իւտառական կեանքէն

Գրեց ՆՇԻԿ ԵՐԷՑ

Ընդ մա՛կով է այս վէպը, որ մօտերս
պիտի լոյս տեսնէ Արաբս տպարանէն:

Բաժանորդագրուիլ փափագողները
5 դրո՛ւ նամակագրուիլ կրնան զրկել
Փիլանթիկի հասցէին: